ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 60-Ա

«10» ՓԵՏՐՎԱՐ 2022Թ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 2-Ի N 22 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՊԼԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 19-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 24-ի «Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսապահովման կարգը հաստատելու մասին» թիվ 824-Ն որոշմամբ հաստատված կարգը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2014 թվականի ապրիլի 2-ի N 22 որոշմամբ հաստատված «Վայոց ձորի մարզի տարահանված բնակչության կենսապահովման գործընթացի նախապատրաստման միջոցառումների» պլանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Պլանի 2-րդ գլխի 4-րդ կետում «5668» թիվը փոխարինել «5991» թվով:

2) Պլանի 1, 2, 5, 7 հավելվածներում ճշտել բոլոր թվային տվյալները:

3) 8-րդ հավելվածում ճշտել Վայոց ձորի մարզի կենսապահովման համակարգի օբյեկտների և նրանց հնարավորությունների վերաբերյալ տվյալները:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Դ.Սարգսյանի վրա:

2/10/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Եղեգնաձոր